

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ  
ԱԶԳ. ՍԱՀԱԿԵԱՆ ԵՐԿՈ. ՎԱՐԺԱՐԱՆԻ ԹԻՒ 2

# ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԱԶԳ. ՍԱՀԱԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ



1935-

ՏՊ. Կ. ՏՕՆԻԿԵԱՆ  
ՊԵՂՋՈՒԹ

373  
4 - 20

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

- MAR 2010  
6105 YAM

ԱԶԳ. ՍԱՀԱԿԵԱՆ ԵՐԿԱ. ՎԱՐԺԱՐԱՆԻ ԹԻՒ 2

373  
4-20

# ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԱԶԳ. ՍԱՀԱԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ



1935

ՏՊ. Կ. ՏՕՆԻԿԵԱՆ  
ՊԵՏՐՈՒԹ



ՕՐՈՅԱ

17 MAY 2013

57. 920

ՍԱՀԱԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱԾԻ ՈՒԽԻ

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Սահակեան վարժարանի ոգին  
 » » անունը  
 » » նպատակը  
 սանելը  
 սաներու տարազը  
 » գոյմերը  
 Արձանագրութեան կանոններ  
 Վնարումի »  
 Ժամանակացոյց  
 Տօներ  
 Պոնյաներ  
 Ճշդապահութեան կանոններ  
 Մաքրութեան »  
 Կարգապահութեան »  
 Քաղաքավարութեան »  
 Առողջապահական »  
 Եկեղեցի յատուկ »  
 Հանդէսի »  
 Առաջինութիւններ  
 Ծնող. պարտականութիւններ

Ծանօթ. — Սոյն կանոնագիրը փոքր փոփոխութեամբ իրենց վարժարաններուն համար մեծաբանակ ապսպրոդներուն կրնանք հայրայթել:



4521-85

Հայ Աղք. Սահակեան վարժարանի երկսեռ պաշտօնէութիւնը կ'զգայ թէ կոչուած է ապրիլ սան սանունիներու հետ, պաշտօն ունենալով անոնց տալշարք մը առաջինութիւններու հետ կեանքի մէջյաշողերու կարգ մը պայմաններ, առաւելապէս աշխատելու կորով, ուսման եւ զարգացման համդէպ սէր:

Երկսեռ պաշտօնէութիւնը ինքինի ստիկանի դիրքին մէջ չզգալով երբեք մտածած չէ արդարութեան կշիռքին մէկ թաթին մէջ դնել յանցանք մը եւ միւսին մէջ անոր պատիժը:

Պաշտօնէութիւնը ինքինի գաստիարակ կը նկատէ, դաստիարակ այն ըմբռնումով, թէ իւրաքանչիւր քայլի մէջ տղուն բով պիտի ըլլայ սխան ու շիտակը ցուցնելու, բացատրելու սխալին ու շիտակին պատճառն ու արդիւնքը իր անհատական եւ ընկերական կեանքի պայմաններէն բաղուած: Ասանկով պաշտօնէութիւնը մրտած է խոհարարի մը դիրքին մէջ, իր աշխատանքի եղանակին նայելով, անոր նման իր մէջ մղում զգալով կերակուրին հետ եփուելու, զայն այս ու այն կողմ զարծնելու, խալնելու, շրջելու, առանց բարկանալու, կոտրտելու:

Ահա թէ ինչո՞ւ հայ ուսուցչին գործը ընհանրապէս եւ Սահակեան վարժարանի ուսուցչութեանը մասնաւորապէս, դժուար է:

Նախապատրաստուիլ լաւագոյն մեջոցներով առաւելագոյն ծանօթութիւնները տալու եւ նոյն ատեն ապառաժի համբռութիւն ունենալ հազար անգամ կրկնուող յանցանքի մը հազար մէկերրոդ խրամն ու թեղադրանքը, յանդիմանութիւնն ու սրբագրութիւնը ընելու, ծանր պարտականութիւն է:

Հնագ տարիներ պէտք չի տեսնուեցաւ արծանագրելու բոլոր այն հարցերը, որոնց վրայ աշխատանք կը թափուէր. այս տարի միայն կարգ մը առաջարիներու վրայ գործնականէն բղասած փորձառութիւնները արծանագրելով ամենուն առջեւ դնել ուղեցինք:

Ինչպէս լնթերցողը պիտի տեսնէ: սովորութիւններու պարզ արծանագրութիւն մէ այս, քան նախատեսուած պատիժներու ուժով օրէնքի վերածուած յօդուածներ:

ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ԱՆՌԻՆԸ

1. — Վարժարանը ունի երկու բաժին մանկապարտէզ և նախակրթարան :
2. — Մանկապարտէզը կոչուած է Զօր. Անդրանիկեան, ի պատիւ մեծանուն և անզուգական հերոսին:
3. — Նախակրթարանը կոչուած է ՍԱՀԱԿԵՍՆ՝ Կիլիկիոյ հայութեան դաղթական կաթողիկոսին անունով՝ քանի որ ան ուրախութեան և ցաւերու օրերուն գնաց Կիլիկիոյ հայուն ճակատագրին հետ քայլ առ քայլ :

Ն Պ Ա Տ Ա Կ

4. — Նախակրթութիւնը տալ առաւելապէս հայերէնով:
5. — Ունենալ է. և Բ. դասարաններ, որոնց մէջ ուժ տալ առաւելապէս Արաբերէնի և Թրանսերէնի:

Ս Ա Ն Ե Բ Ը

6. — Ազգ. Սահակեան վարժարանը երկսեռ է :
  7. — Վարժարան կրնան յաճախել բոլոր փոքրերը առանց ցեղի, կրօնի, յարանուանութեան խտիրի:
  8. — Վարժարանին սաները նուազագոյն 4, առաւելագոյն 16 տարեկան կրնան ըլլալ:
- Մանօթ. — Ծրագրին համաձայն 16 տարիքը շատ է, սակայն զիտնալով որ հայուն պայմանները յաճախ անձեռնոտու կ'ըլլան փոքրիկներու բնականոն կրթութեան, այդքանին թուլատու կ'ըլլանք :
9. — Մանկապարտէզ կը պահուին առաւելազոյն 7 տարեկաններ:

Տ Ա Բ Ա Զ

10. — Մանկապարտէզի փոքրերը պէտք է ունենան երկու կարմիր զոգնոց, պարզ ձեւով, կուրծքին վրայ ձերմակ թելով - Մ. Պ. - բանուած:
  11. — Նախակրթարանի սանուհիները պարզ ձեւով կարուած երկու սեւ զոգնոց և երկու ձերմակ օձիկ:
  12. — Նախակրթարանի Ա. և Բ. կարգի սաները պիտի ունենան 2 սեւ զոգնոց առանց օձիկի:
- Մանօթ. — Գոգնոցները եղած են երկու, որպէսզի լուացուելու ատեն կարելի ըլլայ նոյն տարազով դպրոց գալ: Ոչ մէկ օր սան-սանուհիներ արտօնուած են առանց տարազի դպրոց գալ:
- Առանց տարազի դպրոց եկողներ ետ կը զրկուին:
13. — Գ. Դ. Ե. և Զ. ի սաներ պիտի ունենան հողագոյն շապիկ. և տափատ :
  14. — Սան սանուհիներ արտօնուած չեն զարդ կրելու: Մանօթ. — Սան սանուհիներու զարդերը կը զրաւուին: Գրաւուած զարդերու կորուստին պատասխանատու չենք: Առաջին գրաւուելուն կը յանձնուին ծնողներուն եթէ պահանջեն, անկէ յետոյ կը պահուին մինչեւ դպրոցին լրանալը:
  15. — Սան սանուհիներ պարտին կօշիկով դպրոց գալ: Բոկոտն կամ երսակով վարժարան եկողներ տուն կը դարձուին:

Գ Ո Յ Ք Ե Ր

16. — Ամէն սան պէտք է ունենայ ուսուցիչներէն յանձնարարուած գրքերը և տետրակները, որոնք ունենալու են կողք և վրան փակցուելու է պիտակ:
17. — Ամեն սան ունենալու է իր գծաքաշը, մատիտը, սրելու գործիքը, ոետինը, զրիչը, մելանի ու ծծունը:
18. — Կազամարը ըլլալու է ապահով տեսակէն՝ չթափուելու համար:
19. — Գրչածայրը ըլլալու է պարզ (հայերէն և արաբերէն առանձինն): Ծորագրիչ գործածել արգիլուած է:
20. — Մատիտն ու մելանը ըլլալու են միօրինակ:
21. — Բոլոր գրենական պիտոյքները պիտի գնուին վարժարանէն: Դուրսէն բերուած գոյքեր կը բրաւուին:
22. — Սաներ արտօնուած են նախորդ տարիներու զըրքերը յաջորդներուն ծախել, պայմանաւ որ դրամական ուեէ խնդիր չյարուցուի:
23. — Գիրք մը գնուելէ, դրամը յանձնուելէ յետոյ առանց երկուստէք համաձայնութեան՝ գիրք կամ դրամ ետ պահանջողը անիրաւ պիտի նկատուի:
24. — Ամէն սան իր գոյքերուն վրայ մասնաւոր նշան ունենալու է կորուելու պարագային ճշգելու համար:
25. — Ոչ մէկ սան արտօնութիւն ունի ուսուցչին սեղանին վրայէն մելան, զրիչ, մատիտ, ոետին, գծաքաշ ևայլն առնելու, նոյնիսկ արտօնութիւն

ուղելու չէ:

26. — Առանց ուսուցչին արտօնութեան գրաւուած ոնէ զոյք առնելու փորձ յանցանք կը սեպուի:
27. — Ոչ գպրոցական գոյքեր-խաղալիկ, զիրք, նամակադրոշ և այլ հաւաքածոներ, զարդ կը գրաւուին: Ծանօթ. — Գրաւուած գոյքերուն կորուստին պատասխանատու չենք:
28. — Դանէ զուրո՛ առանց ուսուցչէ մը արտօնուելու, ոչ մէկ սան իրաւունք ունի կաւիճ գործածելու: Ծանօթ. — Դուրսէն բերուած կաւիճներուն համար ալ սաներ պատասխանատու կը նկատուին:
29. — Իւրաքանչիւր գասարանի սրբիչները հայթայթել:

Ա. Բ Զ Ա. Ն Ա. Գ Ր Ո Ւ Ի Թ Ի Ւ Ն

30. — Սան սանուհիներ պարտին արձանագրուիլ յայտարարուած թուականին, որը Սեպտ. 25- Հոկտ 7 ի միջն կրնայ ըլլալ:
31. — Վերաբննելիներ և նոր սաներ գպրոցի բացումէն երեք օր առաջ պարտին քննութեան ներկայանալ:
32. — Նոր սաներու կարգերը վերջնականապէս կ'որոշւին նոյնեմբեր մէկին: Ծանօթ. — Նկատելով որ պատահական քննութեամբ կրնան սաներ ձախողիլ, քանի որ գպրոց ուսուցիչ և հարցում բոլորովին նոր են, պատեհութիւն կը տրուի մէկ ամսուան ընթացքին ցոյց տրուած աշխատանքով վեր բարձրանալ:

Վ Ճ Ա Ր ՈՒ Խ Մ



- 33.—Մանկի համար որոշուած թոշակն է 4 Ա. ոսկի:  
 34.—Նախկրթ. համար Ա. և Բ. դասարան 6 Ա. »  
     Գ. և Դ. » 8 Ա. »  
     Ե. և Զ. » 10 Ա. »  
 35.—Տնտեսական բարուոք շրջաններու այս գումարը  
     կրնայ բարձրանալ մինչև 2-5 Օսմ. ոսկիի:  
 36.—Վճարումները պիտի ըլլան երեք բաժանումով:  
     Արձանագրութեան օրը 2 Ա. ոսկի:  
     Դեկտ. 1 — Դեկտ. 15 մնացեալին կէսօր  
     Փետր. 1 — Փետր. 15 մնացեալը  
 37.—Վճարումները պէտք է լրանան վերոյիշեալ 15  
     օրերուն:

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց Ո Յ Յ



- 38.—Մանկապարտէզը կ'սկսի 7. 45 ին ամառ և ձմեռ:  
 39.—Քառորդ ժամ կը տրամադրուի աղօթքի եւ մաք-  
     րութեան:  
 40.—Կէսօրէն առաջ 4 պահ դաս կը տրուի:  
 41.—Պահերը կ'ըլլան 30 վայրկեան,  
 42.—Իւրաքանչիւր պահէ յետոյ 15 վայրկեան դա-  
     դար:  
 43.—Ժամը 11. 30 - 2 կէսօր:  
 44.—Կէսօրէն յետոյ կ'ունենան երկու պահ դաս:  
 45.—Դպրոցը կը փակուի 3. 30 ին:  
 46.—Դշ. և Շբ. օրերը մինչև կէսօր դպրոց կայ:  
 47.—Նախակրթարանը կ'սկսի 6 ին ամառը. 7 ին ձր-  
     ժեռը:  
 48.—Ժամը 6-7 կը յատկացուի սերտողութեան (ամառը  
 49.—Ժամը 7-7, 45 մարզանք ամառ, ձմեռ:

- 50.—Ժամը 7, 45 - 8, 15 աղօթքի եւ մաքրութեան:  
 51.—Կէսօրէ առաջ 4 պահ դաս:  
 52.—Պահերը 45 վարկեան տեւողութիւն ունին:  
 52.—Իւրաքանչիւր պահէ վերջ 15 վարկեան դադար:  
 54.—12 - 1, 45 կէսօրը առաջ 4 պահ դաս:  
 55.—Կէսօրէ յետոյ 3 պահ դաս:  
 56.—Պահերը 40 վարկեան տեւողութիւն ունին:  
 57.—Դպրոցը կը փակուի 4, 15 ին:  
 58.—4, 30 - 6 սերտողութեան կը յատկացուի:  
 59.—Պահերու թիւը, տեւողութիւնը պայմաններուն  
     համաձայն տնօրէնութեան կողմէ կրնան փոխ-  
     ւիլ:  
 60.—Դշ. և Շբ. օրերը մինչև կէսօր:

Տ Օ Ն Ե Ր



- 61.—Պետական — Նոյ. 11 Զինադադար  
 62.—Կրօնական և Ազգային — Թաղէոս Բարթողիմէոս  
     Նոր տարի  
     Ծնունդ  
     Անուանակոչութիւն  
     Սահակ Մեսրոպ  
     Տեառնդառան  
     Վարդանանց  
     Զատիկ  
     Աւետումն Ա. Ա. Ճ. ածնայ  
     Նահատակաց  
     Ելն ի վիրապ  
 63.—Մասնաւոր —

Պ Տ Ա Յ Տ Ն Ե Ր

- 64.— Վարժարանը ակդրունքով ընդունած է ամիսը  
մէկ օր պտոյտի յատկացնել:
- Ծանօթ.— Տեղական պայմաններուն համաձայն կը  
նախատեսուի Դեկտ. Ապրիլ, Մայիս և Յունիսին:
- 65.— Մասնաւոր պտոյտներու կազմակերպման համար  
առանձին օրեր կրնան որոշուիլ:
- 66.— Սաներ պարտաւոր են ընդհանուր պտոյտներուն  
մասնակցիլ:
- 67.— Սաներ իրաւունք չունին մեծ կամ փոքր ծա-  
նօթներ միասին պտոյտի բերել:
- 68.— Սաներ պարտին իրենց ճաշը միասին բերել:
- 69.— Սաներ պարտին խմելու գաւաթ կամ կուժ միա-  
սին բերել:
- 70.— Ճամբու բնթացքին, քաղաքի փողոցներուն մէջ  
ուշագրութիւն ընելու է ձայնին, ի պահանջել  
հարկին լուր քալելու են:
- 71.— Սաներ պարտին հնագանդիլ իրենց մօտ իրը հըս-  
կող նշանակուած ընկեր ընկերուներուն:
- 72.— Պտոյտի վայրին մէջ նշանակուած սահմանէն հե-  
ռու երթալու չեն:
- 73.— Սաներ պարտին սահմանէն ներս մտնող դուրսի  
ծանօթ կամ անծանօթ անձերուն հետ խնդիր  
չունենալ:
- 74.— Սաներ պարտին իրենց գնումները կատարել  
այն վաճառողդներէն, որոնք սաներու համար  
որոշուած սահմանէն դուրս կը կանգնին:
- 75.— Սաներ իրաւունք չունին հեծանիւ բերել:
- 76.— Պտոյտի պահուն զրսեցիներէն հեծանիւ առնող-  
ներ յանցաւոր կը նկատուին և հեծանիւը կը

դրաւուի:

- 77.— Սաներ պարտին իրենց դրամին և գոյքին տէր  
րլալ և կորուստին իրենք պատասխանատու են:
- 78.— Սաներ պէտք է զգուշանան ունէ ուսուցչէ դրամ  
փոխ առնելէ:
- 79.— Սաներ իրաւունք չունին պտոյտի պահուն ո-  
ւնէ գոյքի կամ գնումի համար քաղաք դառնալ:
- 80.— Սան և սանուհիներ ուշագրութիւն ընելու են  
իրենց խաղերու տեսակին, յարմարութեան և  
չափին:
- 81.— Սան սանուհիներ ուշագիր ըլլալու են հաւաք-  
ման զանգակին:
- 82.— Սան սանուհիներ սիասին, շարքով և լոռւթեամբ  
պիտի վերադառնան:
- 83.— Սան սանուհիներ, երբ իրենց թաղին մօտենան,  
կրնան զատուիլ, պայմանաւ որ խիստ ուշագիր  
ըլլան իրենց քալուածքին, ձայնին, կատակնե-  
րուն և շարժումին:

Ճ Շ Դ Ա Յ Ա Հ Ո Ւ Թ Ի Ւ Ն

- 1.— Սան սանուհիներ պարտին դպրոցի բացման հա-  
մար պաշտօնապէս յայտարարուած օրը ներկայ  
ըլլալ:
- 2.— Միմիայն դպրոցէն պաշտօնապէս ճանչցուած տօ-  
նական օրերուն կրնայ բացակայիլ ունէ սան,
- 3.— Մասնաւոր օրեր - ընտանեկան, յարանուանական,  
ցեղային-նախօրոք արտօնութիւն առնուելու է:
- 4.— Հիւանդութեամբ բացակայողներ պարտին ծնող-  
ներէն թուղթ ներկայացնել:
- Ծանօթ.— Թուղթերը ըլլալու են մաքուր, կանո-  
նաւոր և զրուելու են պահարանի մէջ և պիտի  
ուղղուին զատիշարակ ուսուցչին:

- 5.— Երկարատև հիւանդութեան պարագային խնամող  
բժիշկէն թուղթ ներկայացուելու է:
- 6.— Դասի պահերուն բժիշկի քննութեան կամ դար-  
մանումի երթալու պէտք ունեցողներ պարտին  
բժիշկէն թուղթ ներկայացնել:
- 7.— Ամէն ասնպարտիվերջին աստիճան հոգտանիլ առ-  
տու և կէսօր ճիշտ ժամուն ներկայ գտնուելու:
- Ծանօթ.— Տունէն մեկնող, բայց վարժարան չեկող  
սանի մը բացակայութեան պատասխանատուն ծը-  
նողն է:

Մ Ա. Ք Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

- 8.— Իւրաքանչիւր սան պարտի առառուն ոտք, ձեռք,  
զլուխ լուացած դպրոց գալ:
- 9.— Իւրաքանչիւր սան մազերը յարդարած դպրոց  
մտնելու է:
- 10.— Սանուհիներ պարտին մազերնին անանկ յար-  
դարել, որ ազօթքի, դասի և նման պարագա-  
ներու մազով չըբաղին:
- 11.— Սաներ պարտին երկու ամիսը անզամ մը իրենց  
մազերը մեքենայով կտրել:
- 12.— Սաներ պարտին այս ժամանակամիջոցի ընթաց-  
քին պարբերաբար մազերնին կոկել:
- 13.— Սան սանուհիներ պարտին ամենէն ուշ երկու  
շաբաթը մէկ անգամ տաք ջուրի լոգանք առնել:
- 14.— Սաներ կրնան Մայիսէն յետոյ՝ ծնողներու հսկո-  
ղութեամբ կամ արտօնութեամբ՝ ծովու լոգանք  
առնել:
- 15.— Սաներ պարտին հսկել հագուստի եւ կօշիկի մաք-  
րութեան,
- 16.— Շաբաթը մէկ կամ երկու անգամ կօշիկնին ներ-  
կելու են:

- 22.— Ո.մէն օր ուշադիր ըլլալու են եղունգի մաքրու-  
թեան:
- 23.— Հեռու բնակող սաներ արտօնուած են միասին  
ճաշ բերել:
- 24.— Ճաշ բերողներ պարտին ունենալ անձեռոց, գը-  
գալ, պատառաքաղ:
- 25.— Ճաշէ առաջ և վերջ ճեռք ու բերան լուացուե-  
լու են օճառով:
- 26.— Զուր խմելու ատեն զգուշանալու է բերանը ծո-  
րակին վրայ դնելէ, Զեռք կամ սեփական գաւաթ  
զործածելու է:
- 27.— Սաներ պարտին միշտ մաքու թաշկինակ ունե-  
նալ:
- 28.— Ուէ պարագայի զգուշանալու է դասարանի, սը-  
րահի, բակի կամ ճամբու մէջ թքնելէ կամ քիթ  
մաքրելէ:
- 29.— Խիստ հոգածու ըլլալու է տետրակի և գրքի  
մաքրութեան:
- 30.— Գործածելու է ապահով մելանի չիշ:
- 31.— Խիստ հոգածու ըլլալու է գասարանի, գրասեղա-  
նի և պատերու մաքրութեան:
- 32.— Խիստ ուշագիր ըլլալու է արտաքնօցի մաքրու-  
թեան:
- 33.— Զգուշանալու է ուէ պատի վրայ մատիտով, մե-  
րանով կամ կաւիճով ուէ խօսք գրելէ:
- 34.— Սաներ պարտին նախանձախնդիր ըլլալ լեզուի  
մաքրութեան, օտար և գոհհիկ բառեր, սխալ-  
ներ գործածելու չեն:
- 35.— Սաներ նախանձախնդիր ըլլալու են բերնի  
մաքրութեան, ամէն ճաշէ վերջ լուալով և բա-  
ցարձակապէս հայհոյութիւն չգործածելով:

Կ Ա. Բ Գ Ա. Պ Ա. Հ Ո Ւ Ի Թ Ի Ի Ն

36. — Զանգակներու ուշագիր և հնագանդ ըլլալ պարտին:
37. — Պէտք է ճշդապահութեան հոգ տանիլ:
38. — Պէտք է մաքուր ըլլալ հազուստով, մարմնով, յեզուով ու սրտով:
39. — Զանգակին ձայնը լսուելուն պէս ամէն խաղ, դործ ձղել և աճապարել:
40. — Հաւաքումի և ցրումի ատեն առանց հրմշտկելու, հանդարտ քալել:
41. — Առանց ուեք քրթմնջումի տրուած հրամանին անմիջապէս հնագանդիլ:
42. — Մեծի մը հարցումներուն պատասխանել համարձակ ու լուրջ, առանց կրկնութեան տեղ թողելու:
43. — Ուսուցչին մօտենալ կրթուած շարժումներով և համարձակ:
44. — Ուսուցչի մը տրուած պատիմը լուսութեամբ ու սիրով կրել:
45. — Եթէ տրուած պատիմը սխալ հասկացողութեան մը արդիւնք է, պատիմը կրելէ յետոյ քաղաքավարութեամբ մօտենալ և բացատրել:
46. — Նման պարուզայի աւելի առաքինութիւն է, ուսուցչին չզգացնել իր սխալը և զայն իր բարձրութեան մէջ թողուլ:
47. — Գործուած ուեք յանցանքի համար անմիջապէս ներողութիւն խնդրել մեծէ կամ փոքրէ:
48. — Ուեք յանցանքի ատեն ներողութեան համար մեզ զի գիմողին ներել:
49. — Սրահն ու դասարանէն ներս բացարձակ լուսութիւն տիրելու է:

50. — Աերտողութեան պահուն առանց շրմունքի, միմիայն աչքով կարդալու է: Զայնը կը խանգարէ աշխատանքը:
51. — Տրուած պարտականութիւնները կատարել տառացիօրէն:
52. — Դասերու պատրաստութեան ժամանակ զգուշանալու է ընդօրինակելէ:
53. — Բացարձակապէս հայերէն խօսելու է ուեէ ուսանող: Թրքախօսութիւնը հիւանդութիւն նկատւելու է:
54. — Հայհոյութիւն, ստախօսութիւն, գողութիւն կը բնան գպրոցէն վտարել տալ ուեէ սան:
55. — Սաներ պարտին խմելու և այլ պէտքերը դադարներուն կատարել:
56. — Սաներ՝ դասի ժամանակ՝ խմելու և այլ պէտքի համար արտօնութիւն առնելու չեն:
57. — Սաներ պարտին դպրոցի գոնէն մտնել ու ելլել:
58. — Սաներ պարտին իրենց բոլոր գոյքերը միասին բերել, որպէսզի տուն դառնալու պէտք չունենան:
59. — Սաներ պարտին ամէն կիրակի եկեղեցի երթալ:
60. — Երգող սաներ պարտին դպրապետին հնագանդիլ և անոր որոշած օրերը ներկայ ըլլալ փորձի կամ երգելու:
61. — Սաներ պարտին դպրոցական ընդհանուրուն ներկայ ըլլալ:
62. — Սաներ պարտին պտոյտի ատեն իրենց ձաշը և խմելու գաւաթը միասին առնել:
63. — Սաներ պարտին հանդէսներու ատեն իրենց յանձնուած ուեք պարտականութիւն կատարել:
64. — Սաներ պարտին դպրոցական հանդէսներու տոմսերուն սպառման օգնել գնելով կամ ծախելով:

- 65.— Սաներ սովորելու են գպրոցական կամ ա.լ համար դէսներու ատեն առանց հրաիրուելու, առանց առմսի գպրոցէն կամ սրահէն ներս չմտնել, գրան մօտ չսպասել:
- 66.— Սաներ պարտին ուեէ յանցաւորի անուն տալ, եթէ ուսուցիչ մը հարցնէ:
- 67.— Սաներ պարտին ներել իրենց ընկերներուն խաղի ընթացքին տուած թեթեւ կամ մեծ նեղութեան կամ վնասին:
- 68.— Ըսկերոջ տուած նեղութեան կամ վնասին չդիմացող ուեէ սան պարտի ուսուցչին դիմել հատուցում ստանալու համար:
- 69.— Ուեէ սան իրաւունք չունի իր կրած վնասը իր միջոցով հատուցանելու:
- 70.— Ուեէ սան պարտի իր պատճառած նիւթական վնասը՝ գպրոցին կամ ընկերոջ՝ հատուցանել:
- 71.— Առանձնութեան մէջ տեսնուած յանցանքի մը համար լաւագոյն քայլն է խրատել յանցաւորը:
- 72.— Միմիայն ընկեր մը սրբագրելու համար յանցանքը պէտք է յայտնել ուսուցչի մը:
- 73.— Զգուշանալու է ընկերը պատժել տալու չարամառ թեամբ զայն ուսուցչին յանձնելէ:

Ք Ա. Պ. Ք Ա. Վ. Ա. Բ. Ի Թ. Ի Ի Ն



- 74.— Սան սանուհիներ պարտին՝ գպրոց գալու և արձակուելու ատեն՝ իրենց հանդիպող ընկեր ընկերուհիներուն բարեւ տալ բերնով, ձեռքով կամ զլիսարկ հանելով:
- 75.— Սանուհիներ կը բարեւեն ոլուխը ծուելով:
- 76.— Սաներ պարտին առտու և իրիկուն իրենց հանդիպող ուսուցիչներուն բարեւ տալ:

- 77.— Փոքրեր զգուշանալու են ձայնով բարեւ տալէ:
- 78.— Սան սանուհիներ՝ եթէ կանգնած են՝ պարտին մօտեցող ուսուցչին դառնալ:
- 79.— Սան սանուհիներ պարտին ինքզինքնին ամփոփել խաղի ժամանակ, երբ ուսուցիչ մը իրենց մօտենայ:
- 80.— Ուեէ պարագայի և ուեէ տեղ նստող սան սանուհի պարտի ոտքի ելեկ երբ ուսուցիչ մը մօտենայ:
- 81.— Երբ ուսուցիչ մը կամ հիւր մը դասարան մտնէ, ամբողջ դասարանը ոտքի ելեկ լու է:
- 82.— Սան սանուհիներ խաղի մէջ զիրար հետապնդելու տեսն զգուշանալու են ուսուցչի մը կամ հիւրի մը շուրջ դառնալէ:
- 83.— Սան սանուհիներ միշտ հեռու կենալու են, երբ կը տեսնեն խումբ մը ուսուցիչներ խօսակցութեան մէջ:
- 84.— Սան սանուհիներ գոնէ մը կամ նեղ ձամբէ մը անցնելու ատեն, երբ կանգնող ուսուցիչ մը կամ ուեէ անձ տեսնեն, կամ սպասելու են անոր մեկնումին և կամ ներոզութիւն խնդրելով անցնելու են:
- 85.— Սան սանուհիներ առանձինն կամ շարքով քարեւու ատեն երբ հանդիպին մեծի մը, պարտին ձամբայ տալ:
- 86.— Սան սանուհիներ մտնել ելեկ լու ատեն, երբ իրարու դէմ կելեն, պարտին իրարու ձամբայ տալ:
- 87.— Սաներ վերոյիշեալ սովորութեան համաձայն ապրելու են փողոցի, տան, շուկայի, եկեղեցիի մէջ, գպրոցի կամ արձակուրդի շրջանին, ուսուց-

Կ521-85



- չի, ծնողի և ընդհանրապէս ուեէ մեծի կամ փռքարի հանդէպ:
- 88.— Քաղաքավար սան, սանուհիներու կատակը կ'ըլլայ կրթուած - շարժում, ձայն, բառ:
- 89.— Սան սանուհիներ պարտին խաղի, կատակի, խօսակցութեան ատեն բակի, փողոցի և այլ տեղեր ցածրենել ձայներնին երբ ուսուցչի մը ներկայութիւնը կը տեսնեն:
- 90.— Սան սանուհիներ ուսուցչի մը ներկայանալու ատեն ըլլալու են համարձակ, գլուխնին բարձր, ձեռքերնին կախ:
- 91.— Սան սանուհիներ ուսուցչին հետ խօսելու ժամանակ պարտին ուղղակի ուսուցչին նայիլ:
- 92.— Սան սանուհիներ ուսուցչէ մը յանդիմանուելու պարագային դէմքերնին ուսուցչին դարձնելու են. եթէ կ'ամէնան, այն ատեն զլուխնին հակած, աչքերնին զետին, բայց ձեռք ու ոտք անշարժ պահելու են:
- 93.— Քաղաքավար սաներ բերաննին կերակուր դնելով ոչ ոքի հետ կը խօսին: Ճաշի ընկերոջ հետ կատարուած մտերմական խօսակցութեան պարագային անգամ զգուշանալու է լեցուն բերնով խօսակցելէ:
- 94.— Քաղաքավար սաներ փողոցի և խաղավայրի մէջ ուտելէ կ'զգուշանան, վերոյիշեալ սխալին մէջ չինալու համար:
- 95.— Քաղաքավար սաներ ուեէ ատեն՝ հրապարակի կամ հաւաքոյթի մէջ՝ ձիւթ ծամելով խօսակցելէ կ'զգուշանան:
- 96.— Ուտելու ժամանակ բերանը բանալ կամ ծամելու ձայնը լացնել քաղաքավարութեան դէմ է.

Ա.Ռ.Պ.Դ.Ջ.Պ.Հ.Ա.Կ.Ա.Ն

- 97.— Սան սանուհիներ պէտք է զլուխնին պաղ, ստամոքսնին թեթև և ստքերնին տաք պահեն:
- 98.— Ենջարանի և դասարանի պատուհանները բաց պահելու են:
- 99.— Զգուշանալու են փոշոտ վայրերու մէջ կենալէ:
- 100.— Մաքուր օդի մէջ պտոյտ և խաղ կատարելու են:
- 101.— Աղտոտ ձեռքերով աչք ու բերան խառնելու չեն:
- 102.— Զգուշանալու են գրքի և տերակի վրայ ծոելէ:
- 103.— Զգուշութիւն ընկելու են նստուածքի:
- 104.— Կերակուրի համար որոշ ժամեր ունենալու են:
- 105.— Որոշուած ժամանակն զուրս կերակուր, պտուղ և նման ուտելիքներէ հրաժարելու են:
- 106.— Ստամոքսը պարպելու համար որոշ ժամեր ունենալու են:
- 107.— Զգուշանալու են խակ կամ աղտոտ պտուղ ուտելէ
- 108.— Ողելից ըմպելիներէ հեռու կենալու են:
- 109.— Խաղի, հանգստի և քնանալու որոշ ժամեր ունենալու են:

Ա.Ռ.Պ.Ի.Ն.ՈՒԹԻՒՆԵԼՐ

- Վարժարանը կը բազայ սաներուն մէջ զարգացնել հետեւեալ առաքինաւթիւնները:
- Սիրել. Աստուած, մարզը, հկեղեցին, հայրենիքը, ազգը, ընտանիքը, ուսուցիչը, ընկերը:
- Յարգել. Ծնողը, ուսուցիչը, մեծը, փոքրը, հիւրը:
- Իր հաւատքը, օտարին հաւատքը:
- Խօսիլ. Հայերէն:

Էլլալ - Ընկերասէր, ճշդապահ, մաքուր, քաղաքացի  
վար, ձշմարտախօս, հնագանդ, աշխատասէր,  
համարձակ, հաւատարիմ, ուղղափառ, նուիր-  
ւող, խնայող, խոստմնապահ, յարատեւող,  
կամքի տէր, ինքնավտահ, համեստ, պարտա-  
ճանաչ:

Ե Կ Ե Ղ Ե Ց Ի



- 1.— Սաներ պարտաւոր են եկեղեցի երթալ ամէն  
կիրակի:
- 2.— Եկեղեցին ներս բացարձակ լուրթիւն պահելու է:
- 3.— Սաներ կրնան արարողութիւններուն մասնակցիլ-  
երը ժողովուրդին թուլատրուած է:
- 4.— Սաներ պարտին վարժուիլ դրամական նուէրներ  
տալ եկեղեցին,
- 5.— Սաներ պարտին մասնակցիլ դպիրներու երգեց-  
ղութեան, սթէ դպրապետը յարմար նկատէ:


Հ Ա. Ն Դ է Ս



- 1.— Դպրոցական հանդէսներուն կրնան մասնակցիլ,  
անոնք, որ հնագանդութեամբ, կարգապահու-  
թեամբ ու աշխատանքով գոհ ժողուցած են ու-  
սուցչութիւնը:
- 2.— Հակառակ հանդէսի մէջ բաժին չունենալուն ամէն  
սան պարտաւոր է տոմս սպառել իր ծնողաց և  
բարեկամներուն մօտ:
- 3.— Ուէ հանդէսի մէջ բաժին ունեցող սան պարտի  
իրմէ պահանջուած հագուստ, առարկայ և զարդ  
— իր բաժնին անհրաժեշտ — անձամբ հայթայթել:
- 4.— Մարզահանդէսը պարտաւորիչ է բոլոր սաներուն:
- 5.— Հանդէսի մէջ բաժին չունեցող ուէ սան, առանց

տոմսի դպրոց մանելու իրաւունք չունի:  
6.— Հանդէսներու ժամանակ դու բոի դրան առջև  
պէտք չէ կենալ:

Կ Ա. Ր Գ Ա Փ Ո Խ Ո Ի Թ Ի Ի Ն



- 1.— Նիշ կը դրուի 100 ի վրայ:
- 2.— Յաջող են այն դասերը, որ 70 կամ աւելի նիշ  
առած են:
- 3.— Անյաջող են 70 էն վար նիշ առնողները:
- 4.— Ա. կարգի դաս կը սեպուին Հայ. Ֆրան. Արար.  
Թիւ Գիտ.:
- 5.— Բ. կարգի դաս կը սեպուին Կրօն, Ա. Պատմ. Բ.  
Պատմ. Աշխ.
- 6.— Գ. կարգի դաս կը սեպուին Գծագ. Գեղգ. Երդ.  
Զեռգ. Մարգ.
- 7.— Կարգ չեն փոխեր  
ա. - Ե. և Զ. ի այն սաները, որ միմիայն Հա-  
յերէնի մէջ անյաջող են:
- բ: - Բոլոր այն սաները, որ ա. կարգի երեք դա-  
սէ կամ Ա. կարգի երկու և Բ. կարգի մէկ  
դասէ անցած չեն:
- գ: - Ա. կարգի երկու դասէ չանցնողներ, եթէ  
վերամուտին քննութեան մէջ անյաջող ըլ-  
լան:
- դ: - Բոլոր այն սաները, որ երկու տարի իրա-  
րու ետեւէ նոյն երկու գասերուն մէջ ան-  
յաջող ըլլան:
- 8.— Զ. Դասարանի անյաջող սաները Մայիս մէկն  
սկսեալ իբր ունկնդիր պիտի նկատուին, եթէ 7.  
յոդուածի 4 պարագաներուն մէջ յիշուած դասե-  
րուն 65 էն վար նիշ առած են, որպէս միջին և  
յաջորդ տարի պիտի կրկնեն:

9.— Ուել գասարանի մէջ սան մը միայն երկու տառի կրնայ մնալ: Երբորդ տարին կարգ չփոխող սաներ դպրոց չեն ընդունուիր:


ԾՆՈՂԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆ

- 1.— Զաւակները արձանագրել ճիշտ ժամանակին:
- 2.— Վճարումներու զանոնաւորութեան ուշադրութիւն ընել:
- 3.— Օգնել զաւակներուն, որպէսզի ըլլան ճշդապահ և կարգապահ:
- 4.— Դիւրութիւն տալ զաւակներուն գոյքերու հայթայթման և աշխատանքի:
- 5.— Զաւակներուն առջև ուսուցիչներու մասին խօսել յարգանքով:
- 6.— Զգուշանալ զաւակներուն տարիքին անհամապատասխան նիւթերու շուրջ՝ անոնց առջեւ խօսելէ:
- 7.— Ուել գիտողութիւն, գանգատ կամ իմացում կատարել գրաւոր, մաքուր թուղթի վրայ և պահարանի մէջ դրուած:
- 8.— Ստորագրել զաւակներու վիճակացոյցները:
- 9.— Վիճակացոյցներու ետև, ձնողոկան գիտողութիւններու էջին մէջ արձանագրել զաւակներու մասին իրենց իրական գիտողութիւնները:
- 10.— Ուել գանգատ կատարել՝ անձամբ կամ գրաւոր ուղղակի տնօրէնութեան:
- 11.— Դպրոցին մէջ պատահած ուել դէպքի պատասխանաւորուն տնօրէնը նկատել և իրեն հետ գործունենալ:
- 12.— Օգնել վարժարանի հանդէսներու տոմսերուն սպառման՝ գնելով և ծախելով:

13.— Զանալ դպրոցական հանդէսներուն ներկայ ըլլալ:

14.— Գիտնալով որ կարելի չէ բոլոր սաներուն բաժին տալ ամէն հանդէսի և թէ հանդէս մը կը տրուի հասարակութիւնը յարգելու և անոր հաճոյք տալու, չսպասել որ ամէն սան իր բաժինը ունենայ: Ուստի չզանգատիլ:

15.— Տնօրէնութեան կամ հոգաբարձութեան կողմէ տրուած ծնողական ժողովներուն անպայման ներկայ ըլլալ:



## **ՎՐԻՊԱԿ**

12. Էջեն 13. Էջ անցնելու ատեն յօդուածներուն  
թիւերու սխալը շտկել 16, 17, 18 եւայլն:



«Ազգային գրադարան



NL0231787

Հ Յ Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

**ԱԶԴ. ՍԱՀԱԿԵԱՆ ԵՐԿԱ. ՎԱՐԺԱՐԱՆԻ**

---

1. — ՄԱՆՈՒԿԿԻ ԲՆՈՒԹԵԱՆ ՄԵՋ  
ԵԽ ԳԻՒՂԻՆ ԹԻԹԵՌՆԻԿԸ                          ԳԻՆ 10 Ա. Դ.
2. — ԿԱՆՈՆԱԳԻՐ ԱԶԳ. ՍԱՀԱԿԵԱՆ  
ՎԱՐԺԱՐԱՆԻ                                  ԳԻՆ 10 Ա. Դ.

Ստանալու համար դիմել՝ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՀՈԴԱ-  
ԲԱՐՁՐՈՒԹԵԱՆ. Նամակատուփ թիւ — 616

**ՄԱՄԼՈՅ ՏԱԿ ԵՆ**

- 1.— ՈՒՍՈՒՅՉՉԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԵՐ
- 2.— ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆԵՐ

